

ՔԱՏԱՆՈՐՈՒ ԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պուշկարիոյ համար	12 հր.
Տարեկան	6 "
Սրատահմանի համար	15 "
Տարեկան	8 "
Սրատահմանի համար	3 հ.ր.
Տարեկան	1.50 "

ԿԱՆԻՒԻԿ ՎՃԱՐՆԵՐ

Մասնագրան սոյր ստացիկ  
երեսին համար 40 սանդիս  
հ. իսկ վերջին երեսին համար  
20 սանդիս հ. երեսին  
սանդի սանդիս համար  
20 Օլո գեղջ կըլլայ:

Պուշկարիոյ համար ձեռքի  
( 15 ՍԱՆԹԻՄ )

# ՇԱՐՄ

R. P. Kalémecarian  
Mechitharistangasse W. 4  
Vienna  
(Autriche)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՄ ՈՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նախկ եւ դրսւմ դրկեյ  
Խնրագրութեանս հասցիկն

Редакция на вестникъ  
«Шаржумъ»  
Варна.

Redaction du journal  
«Charjoum»  
Varna (Bulgarie)

Կրտսիւնք եւ չնճ տուիր

Սրատահմանի համար ձեռքի  
( 20 ՍԱՆԹԻՄ )

## ՉԸ ՁԵՆԱՆՔ ԵՒ ՍԵՐԸ ԶԱՐՈՒՆԱԿԵՆՔ

Բուս կառավարութիւնը սկսել է թուրքիային սպառնալ հայերիս վիճակը բարւոքելու համար: Մեզ շատ լաւ յայտնի է թէ Ռուսիա միշտ անտարբեր գտնվեց զէպի մեր տանջանքները Տաճկաստանում եւ իր երկրի մէջ էլ ինքը սկսեց տանջել. ուրեմն ինչո՞ւ այս փոփոխութիւնը Ռուսական քաղաքականութեան մէջ: Եւրոպայում այդ վերադարձն են Կրան, որ չորս մեծ պետութիւնները իրենց Պուսայ գետաանների զինուորական կցորդներին ուղարկել են Հայաստան եւ Մակեդոնիա զինուորական ուսումնասիրութիւններ անելու, որոնց բուն նպատակն է, իբր թէ, ազգել թուրքիայի վրա՝ բարեխաւելու իր հպատակ քրիստոնեաների վիճակը որպէսզի արեւելեան հարցի բորբոքումովը խաղաղութիւնը չը վրդովվի:

Անչուշտ Ռուսիա իր այս գէպի հայերս բռնած նոր գիրքովը քաղաքական մի փորձացաւ ունի. մի փորձացաւ որը պատճառում են ինչպէս երեւում է իր Տաճկաստանի մասին փայլալայած ծրագրիները իրագործման խոչնդոները, ինչ տեսակի եւ լինեն դրանք եւ որ տեղից էլ որ բղխած լինեն:

Նոյնը կարելի է ստել Եւրոպական միւս մեծ պետութիւնների մասին, եթէ նրանք իսկապէս այդ զինուորական կցորդներին ուղարկել են տաճկահպատակ քրիստոնեաների վիճակը բարելաւելու մտքով: Նրանք էլ իրանց շահերն ունեն թուրքիոյ մէջ եւ կը ցանկային թուրքիան՝ գոնէ որոշ ժամանակի համար, տեւողական խաղաղութիւն ունենայ եւ իրենք կարողանան իրանց ծրագրիները իրագործել, իսկ այդ խաղաղութիւնը կարող է գոյութիւն ունենալ միմիայն քրիստոնեաների անտանելի կացութիւնը գոնէ մի քիչ մեղմացնելով. այնինչ հիմա՝ այդ քրիստոնեաների՝ հայերի եւ մակեդոնացիների տանջանքը հասել է այն կէտին, որից յետոյ ճնշված ժողովուրդները շատ վատնապարհ են դառնում...

Ուրեմն ուզում են այդ վտանգի առաջը առնել:

Այսօր իրողութիւն է որ Ռուսաստան սպառնում է թուրքիային հայերի պատճառով. իրողութիւն է եւ այն որ զինուորական կցորդները ճամբայ են ընկել «ուսումնասիրութիւններ անելու»: Եւ այդ լուրերը մեր ժողովուրդի մի մասի վրա բաւական զօրեղ ազդեցություն են գործել, ու ժողովուրդի այդ մասը ուղղակի այն հետեւանքն է սպասում, ինչ որ ամէն մի հայ կը բաղձար թշառ հայ ժողովուրդի համար: Ծիշգ է, միսթարական երեւոյթ է որ հայկական հարցը նորից քաղաքական սեղանի վրա է դրվում՝ եւ կարող է պատահել որ հետզհետեւ աւելի բորբոքվի, աւելի արծարծվի եւ աւելի սուր կերպարանք ստանայ, բայց մենք՝ երբէք չը պէտք է մոռանանք որ մեր հարցը երեւան է դալիս շահագործվելու համար. ոմանց կողմից մեծ շափով, ոմանց աւելի նուազ. ուստի մենք՝ միսթարվելով հանդերձ որ մեր հարցը քաղաքական հարց է եւ ոչ մի պետութիւն կարող է զանց առնել հայկական խնդիրը. պարտաւոր ենք առանց շահալու այս եւ այն բարեյալող երեւոյթներով, որոնք ստեղծվում են մեր խնդիրը շահագործել ուզող Եւրոպական պետութիւններից, շարունակել մեր պատմական ընթացքը: Միայն այդ ընթացքով մենք պէտք է կարողանանք իրենց շահերի համար մեզ պաշտպանող շահագործ պետութիւնների իրակտնապէս սպառնական դիրք բռնած միջոցին մեր իսկական շահը պաշտպանելու պատրաստ եւ աշատութեան արժանի ժողովուրդ լինել:

Թող Եւրոպական պետութիւնները իրանց շահի համար մեր խնդիրը բորբոքեն, այդ մեզ համար էլ շահաւոր է. բայց միայն այն պէպիս, երբ մենք չը շահալու, յոյսերս միայն դրանց վրա չենք դնիլ. այլ մեր զինուորական գործը կը շարունակենք, որպէս զի յարմար պարագային մենք էլ մեր լաճիւնը կարողանանք ստանալ:

«Ով չուտ, նա կուշտ», ասում է մեր ժողովուրդական առածը. եւ մեր ազատագրական գործի մէջ, այդ իմաստալի նշանաբանը երբէք չը պէտք է մոռանանք:

«Ով չուտ, նա կուշտ», ասում է մեր ժողովուրդական առածը. եւ մեր ազատագրական գործի մէջ, այդ իմաստալի նշանաբանը երբէք չը պէտք է մոռանանք:

Այսօր իրողութիւն է որ Ռուսաստան սպառնում է թուրքիային հայերի պատճառով. իրողութիւն է եւ այն որ զինուորական կցորդները ճամբայ են ընկել «ուսումնասիրութիւններ անելու»: Եւ այդ լուրերը մեր ժողովուրդի մի մասի վրա բաւական զօրեղ ազդեցություն են գործել, ու ժողովուրդի այդ մասը ուղղակի այն հետեւանքն է սպասում, ինչ որ ամէն մի հայ կը բաղձար թշառ հայ ժողովուրդի համար: Ծիշգ է, միսթարական երեւոյթ է որ հայկական հարցը նորից քաղաքական սեղանի վրա է դրվում՝ եւ կարող է պատահել որ հետզհետեւ աւելի բորբոքվի, աւելի արծարծվի եւ աւելի սուր կերպարանք ստանայ, բայց մենք՝ երբէք չը պէտք է մոռանանք որ մեր հարցը երեւան է դալիս շահագործվելու համար. ոմանց կողմից մեծ շափով, ոմանց աւելի նուազ. ուստի մենք՝ միսթարվելով հանդերձ որ մեր հարցը քաղաքական հարց է եւ ոչ մի պետութիւն կարող է զանց առնել հայկական խնդիրը. պարտաւոր ենք առանց շահալու այս եւ այն բարեյալող երեւոյթներով, որոնք ստեղծվում են մեր խնդիրը շահագործել ուզող Եւրոպական պետութիւններից, շարունակել մեր պատմական ընթացքը: Միայն այդ ընթացքով մենք պէտք է կարողանանք իրենց շահերի համար մեզ պաշտպանող շահագործ պետութիւնների իրակտնապէս սպառնական դիրք բռնած միջոցին մեր իսկական շահը պաշտպանելու պատրաստ եւ աշատութեան արժանի ժողովուրդ լինել:

Թող Եւրոպական պետութիւնները իրանց շահի համար մեր խնդիրը բորբոքեն, այդ մեզ համար էլ շահաւոր է. բայց միայն այն պէպիս, երբ մենք չը շահալու, յոյսերս միայն դրանց վրա չենք դնիլ. այլ մեր զինուորական գործը կը շարունակենք, որպէս զի յարմար պարագային մենք էլ մեր լաճիւնը կարողանանք ստանալ:

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

4. ՊՕԼԻՍ, 21 Մայիս

Երկու օր առաջ Սահմանադրութեան արեւարձի օրն էր: Սահմանադրութիւն... ո՛չ, ո՛չ ծաղրածութիւն... գրիշտ չի երթար գրելու: Աւելի լաւ է լուսթեան տալ... թերեւս տեղակիւն թերթերը բան մը գրեն, քաղցեք անկէ, եթէ կուզէք: Ես կը հրատարկեմ այդ արիւնտս վէրքը խառնելէ:

Ընդհանուր լուրեր.— «Ճրանք» թուրթեր Չայթուկի տեղոյս թղթակիցը լուր մըն է առեր որ «Սէրս» (՝) կողմերը հայերու եւ քիւրտերու մէջ նոր ընդհարում է պատահել եւ քիւրտերը բաւականաչափ կորուստ են ունեցել:

Արդեօ՞ր նորէն զինակիրներու խումբ մըն է եւ ո՛ւր է արգեօք ատ «Սէրս» ըստածը. ի՞նչ անունի սղուալում է:

Հայկական բոշա յեղափոխականներու աչքը լոյս: Թո՛ղ ասոր ալ անունը արշաւանք կնքեն, ու թուղթէ սուրբրով երեւայական թշնամիներու դէմ՝ կռիւի ելլան Բարիզի ու Սլեքսանդրիոյ օթէլներու մէջ:

քերու գողութեան մասին եւ կըսէր որ հայերը «բաւական ապուշ են. գողուներ է՛ ալ ո՛ւր թերթերու մէջ առ խնդիրը կը ձեռնեն անչով, անուններով, որ հոս լըրտեսներու ամբողջ բանակը կիմանայ»: Կարմրեցայ, բայց մինչեւ վերջը անտարբեր պահեցի ինքզինքս: Ի՞նչ ընեմ, թուրքի մը վրայ անչափ վստահութիւն չունիմ, որ ցաւս յայտնեմ, թէ մեր մէջ ալ ազգասէր-լրագրագետ-լրտեսներ կան, ան ալ հաւի ուղեղով օժտուած...

Թուականէս եօթը օր առաջ Բ. Գաւր բարս լաղուով բողբաղի մը զրկած է ֆրանսական դեսպանին, ըսելով որ «պէտք է իրենց փոստատունը կարգաւորել, սրովհետեւ ժընէվ հրատարակուած հաղարարոր օրինակ կոչեր են բռնուած ատ փոստային մէջ»:

Քօնսթանպուլի պատասխանած է որ փոստան մեղաւոր չէ, այլ զրկողներն ու ստացողներն են յանցաւոր. վարչութիւնը անսածը եւ կը զրկէ:

Մայիս 12ին Բ. Գաւր չըլտաբերական մը զրկեց ամէն գեսպաններուն, որու մէջ յայտնած էր թէ Բիւրքի աշխարհացոյցին նոր տպագրութիւնը իսպառարգիլուած է թուրքիա մտցնել, որովհետեւ անոր մէջ Անատոլի մէկ մասը նշանակուած է «Հայաստան» անունով... է՛, գեսպանները եթէ ուզեն բերել տալ Բ. Գաւրէն պիտի հարցնեն. աւնոց համար ատ արգելքը զոյուլթիւն չունի եւ անոնք շատոնց գիտեն թէ ո՛ւր է Հայաստանը... Աշխարհացոյցի մը արգելքը Հայաստան ջնջել ըսել չէ:

Մայիս 14ին Համիտ պէյն ալ փախաւ Պուլէն, անցաւ Աթէնք, Իսթանբուլ Բէմալ պէյի քովը: Համիտ պէյ Երիտասարդներու կուսակցութեան է եւ հոս պաշտօնեայ մըն էր:

Գուցէ օր մըն ալ Սուլթան Համիտը փախչի . . .

Կարծեմ արգէն գրած եմ որ Աւստրիական դեսպանատան զինուորական կցորդը զնայ Հայաստան և Քիւրտիստան, իսկ Գերմանական և Անգլիական կցորդները՝ Մակեդոնիա և Ալպանիա զինուորական ուսումնասիրութիւններ ընելու և Իտալական ալ կը պատրաստուի երթալու :

Աս միտաբանակ կատարուող «ուսումնասիրութիւնները» շատ մը բացատրութիւններու տեղի են տուած, բայց ամէնքն ալ ենթադրական . լոկ բառերու և հաւանականութիւններու վրայ հիմնուած . ատոր համար ալ աւելորդ կը համարենք մէջ բերել :

Անգլիական դեսպանի ստացած տարօրինակ շնորհատրական ուղերձը, Վիքթորիայի Տլամայ յօդուածին առթիւ, ինչ կը կարծէք, որ մէջ ըլլայ . . . Պօլսոյ «Երեսօր»-ը լրագրող թերթի մը միտքն էր . . . Տարօրինակ չէ՞ միտքն էր Նուրիի հոս ալ ժէօն թրքական քօմիթէ մը կայ եղեր : Է՞, ալ ինչպէ՞ս Համիտ հանդիսաբանայ :

ԲԱԺ

ԱՅԱ ԹԵ ԻՆՉՈՒ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ

«Իրաւունք»-ի վերջին թիւին մէջ, որ հիմա, Գուրպէթեանի բացակայութեան պատճառաւ, կը խմբագրուի «Տաճկան Լրտես Գալիլի» Պօլսոյ լրտեսագետին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՈՑ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՑԻԲԻ ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ՅԵՏՈՑ ՈՒ ՅԵ ԱՓՈՒՆԹԵԱՆ ՄԱՂՈՒՄ

ԺԲ

Այդ քրտական ժողովը միտաբան հաւանութեամբ սա իմաստով երկու նամակներ գրեց, մէկը Մշոյ միջոցառումին, թէ՛ «իւր ազտուան անցնելով և հրապարակի վրայ յայտնի ճանչցուած Օրկիոյ պիւղացի Յակոբ սարկաւազ ըստածը, որ երկար սարկներէ ի վեր Մուշը իր գաւառներով կը խառնէր ու կը խառնակէր, ինչպէս երթալով ալ այդ խառնակիչի գաղա-

ուղուած նամակին մէջ լրտեսութեան ինքնաձու ներկայացուած Տիգրան ձգնաորեանէ, նախաօգուած մը կար, որով Տ. անուանով մէկը կողմայ թէ ինչո՞ւ գոյութիւն ունին արտասահմանի այն հայ լրագիրները, որոնք սողուն, թուրմուկաճի կայլն բառերը ի գործ կածեն, այնինչ մամուլին մէջ պէտք էր անուշ, նրբին դարձածներով (այսինքն ճիւղութեամբ) խօսիլ ժողովուրդին հետ :

Եւ մենք կուզենք պատասխանել այդ ըստ «Գալիլի» նամակին լրտեսական ինքնաձու Տիգրան ձգնաորեանի ներկայիս խմբագրած «Իրաւունք»-ի յօդուածագիր «Տ. Ի» հարցին :

Գրեաւ, «Պ. Տ. . . » թէ ինչո՞ւ այդ սեռակ մամուլը գոյութիւն ունի . որպէս զի արտասահմանի հայութեան հասկնէ թէ լըրտեսները զանազան գիմակներով մեր մէջ կը մտնան, անոնք իրր թիւրք կառավարութեան գործիքներ յեղափոխութիւնը կը դատարիտեն, երբեմն իրենց դաւաճան լինելը ծածկելու համար ժողովուրդին գոյութեան թիւններու վրայ կուլան, թերթերու մէջ յօդուածներ կը գրեն, երբեմն թերթեր կը խմբագրեն, շատ անգամ այնքան ճարտար կը լըլլան որ յեղափոխական գործիչին յանձնարարական կուտան Սոլախիբ ամենապարտաւոր սակար հայերուն, զանոնք յեղափոխութեան համակիրներ կայացնելով . յետոյ «Պ. Տ. . . » գրեաւ ինչո՞ւ գոյութիւն ունի այդ՝ քիչ նման «քնքուշ» ներքալուրդ բարեկիրթ մարդոց համար առելի մամուլը, որպէս զի արտասահմանի հայութեան մտանայնց ընէ կեղծ մուրհակ շինողները, Օ. ար նաւային ընկերութիւնները հայ պանդուխտներու անունով խաբող և ստակ շորթողները, թրքական բարքով «քէօմիւրճի պողմասի» և թուրմուկաճի խմբագիրները, որոնք կը յանդգնին իրենց սրկիկայ-

փարները՝ հայ ժողովուրդեան մաս մը մարդոց մէջ ընդունելութիւն գտնելով առաջ գացին, որպիսիք էին Մարգար և այլն . այդ ընթացքով ամբողջ Մշոյ գաղտնի հայութիւնը մահաճակատագրի վրայ յայտնի մարդասպանութիւն, կողպտուած և ստերումներ կը ընեն . ու կառավարութիւնը ատոր հանդէպ անտարբեր կը գրտնուի . այդ պատճառաւ իրականութիւնը իր նոյնութեամբ հրապարակ գնելու համար, կը յայտնենք որ, մինչև այսօր հայերը կը խաբէին կառավարութեան թէ Յակոբ սարկաւազը Մուշէն հեռուած է, այնինչ սակայն տեսակ գոյնի և կերպարանքի ներքեւ, Յակոբ սարկաւազը իրենց մէջ կը մտնեն, և միւս կողմէն կառավարութեան քթին խնդրով պարզ գործիք զարձուցած են իրենց : Մենք իրբու իսլամ, իսլամական կրօնի շահերն ինկատի աւնող և

կան մթնոլորտէն սողալով անցնիլ մարտի հայ տարրին մէջ և զայն վարակել :

Այս դու, «Իրաւունք» Պ. Տ. . . այդ ինչ աղի արցունքներ կը թափես արտասահմանի հայ մամուլի վիճակին վրայ . կաշիք լաւ ներկէ, կը ճանչցուիս : Անշուշտ դու կը հասկնաս թէ «Իրաւունք» մը ըլլալը ինչ կը նշանակէ, բայց ընթերցողներուդ ալ կուզեմ հասկըցնել :

«Իրաւունք»-ը ֆրանսացի անմահ թատերագրիկ Մօլիէրի նախադրած կաթոլիկ վարդապետի տիպն է՝ սր աչնիւ ընտանիքի մը մէջ հոգեւոր դատարարի էր, բայց նոյն տան պատիւը ամենայն ցածութեամբ արտատարեց . և իր այդ ցած նպատակին հասնելու համար, միշտ «անուշ և նրբին դարձուած» ներքալուրդ կաճէր : Ճիշդ Պ. Տ. . . ի ուղած ինչպէս :

Ինչպէս կը ըսեն «նրբուն» ստանայ գրեւէն հրեշտակ» էր . . .

Կը հասկնանք զքեզ, Պ. Տ. . . նոյնպէս և Տիգրան ձգնաորեանէ մը կառավարուած Տալուսի և կատակի յաջորդ Իրաւունք թերթերու հակառակ ձեր բազմաթիւն, կը բարեմաղթենք որ արտասահմանի հայ սրկիկաները, լրտեսները, սողունները հարուածող թերթերը շատ լինին մեր մէջ : ( )

Կարծեմ այս լաբիւրինթոսի մէջէն պիտի կրնար դուրս ելլալ, Պ. Տ. . . որովհետեւ շատ մը լաբիւրինթոսներէ դուրս սողած կերեւաք : Բայց խկապէս կը վախնամ թէ օր մըն ալ այնպիսի լաբիւրինթոսի մը մէջ ինչաք որ բնաւ չի կրնար դուրս սողալ . . .

ԿԵՏ

( ) ( )

( ) Պ. Տ. . . ներքեւք որ ձեր ջիւղերուն դիպող բառերը հոս շատ կրկնած է կար :

Դ. Խ.

Չերս պաշտպան անոր, արդարութիւնը հրապարակի վրայ գնելու համար կուգամք խնդրը ներկայիս պարզել, և կառավարութեան լուրջ ուշադրութիւնը հրաւիրել, գալիք պատասխանատուութիւնէն ազատ մնալու համար :

Մէկ օր առաջ հինգ վարդենիսցի տից ցգլուի զինուած երիտասարդներ մեր վրայով անցնելով, Մուշախչէն հայ գիւղը գացին, որ երկար ժամանակներէ ի վեր Յակոբ սարկաւազը այդ գիւղին մէջ գտնուելը լսելով, մենք կը լրտեսէինք, յարմար պարագային սպասելով ձերբակալելու համար . ատոնց երթալու ևս այդ բանի հետ կապ ունենալն հաստատուելով, հարկադրուեցանք ատոնց հասարակական անցքերն գոցել, որպէս զի վերագործին թէ կարելի է, Յակոբ սարկաւազը հետեւին գրտնուի, ձերբակալելով կառավարութեան յանձնենք . ճիշդ ինչպէս որ

ԸՆԿԵՐՈՋԱ ՊԱՏՄԱԾԸ

ԼՈՆՏՈՆՑԻՆԵՐՈՒՆ ԿԵԱՆՔԷՆ

ԵՐԱՉ ԲԱՅՑ ՏԵՈՒՐ ԽՊԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(Շար. նախորդ քիւնի և քիւն)

Ա. «Կեդրոն» նպատակաւոր «Միութեան» հարց մը մէջտեղ նետեց, որուն շուրջը հաւաքելով ամբողջ բաւական երկար ժամանակ զբաղեցուց անով : Ձեզ ծանօթ ըլլալով չեմ ուզեր խօսիլ «Կեդրոն»-իս բնած միջոցներուն վրայ, գորս բաւ աստ ջարդը գործադրել անկարելի բնելու համար . ու ժեզկցիներուն յոսիլունը, իր ալ խօսիլը փաստ ունենալով իր ձեռքը, միտիտ ամբողջ հաւատարմաց «Կեդրոն»-ը թէ «Միութեան» ջերմ բազմապիւղ է . և թէ՛ արդիւրք ժեզկցիները են :

Բ. Նկատելով որ վեհ. Սուլթանը ժեզկցիներուն հետ բանակցելու համար մարդիկ զրկեց և այդ բանակցութիւնը հրատարակուեցաւ . ժեզկցիներուն օսկներն մէջ . և որպէս զի ժողովուրդը հրապարակելով չի յարն ժեզկցիներուն, «Կեդրոն» ալ փափաքեցաւ յարաբերութեան մէջ մանել Բարիզի դեսպանատան հետ :

Գ. Նկատելով որ Մակեդոնական Գիտութեան «Կեդրոն»-իս կարեւորութիւն չի ապով, ժեզկցիներուն միւս թիւան ձեռք կտակառեց—հոս աստ նախօր մեծ շունչ մը առաւ և քրտան իրորն յայտարարեց «Իսկան մակեդոնացի վասերը—եւ որպէս զի «Կեդրոն»-իս համակիրներուն ու ամբողջին ցոյց տրուէր թէ և ան այդ ասպետական քայլին աւելի լաւը կրնար ընել, միացաւ Արմենիային հետ, այն ինչ, ան ալ «Կեդրոն»-իս սկզբունքին կը հետեւէր, երկրին մէջ գործելը փափաքեցաւ կը նկատուէր :

Դ. Տեղեկանալով որ ժեզկցիները Լազիի ժողովին պատուիրակ զրկելու համար միթիւններ ընել տալ կուզեն, «Կեդրոն» յարմար դասեց անմիջապէս հրահանգ զրկել մասնաճեղքերու որպէս զի միթիւն կազմելու առաջնութիւնը իրենք ձեռք ձգելու աշխատին :

Վերջապէս, Տեառք, եթէ հոս բանախօսութեան մէջ մեր արտասահմանեան գործունէութիւնը միտք մի թուելու ելնիմ, շատ երկար պիտի սեւէ . իբր ամփոփում ըսեմ որ, չի կայ սեղ մը, ժամանակ մը, ուր

կը կարծիքնք՝ նոյնպէս ալ եղաւ . վերագործան այդ երիտասարդներն Յակոբ սարկաւազին իրենց հետ ունենալով, բայց այնպիսի կեղծ քող մը ներքեւ և կնական տարազով ( ) մը, որ մարդ կարող չըլլայ կառավարել, այդ գաւազարական խաղն տեսնելով, Իր կարծեմութեամբ նշանաւոր

( ) Մշոյ կողմի նոր ամուսնացեալ աղջկները, մինչև որ գաւակ մը բերեն, իրենց երեսներնին մէջ մեծ կազմալով գոց է, և մարդ չի կրնար ան նց երեսը տեսնել : Եւ քանի որ քիւրտերը պարտուած են, ճիշդ կիւր խեղաթիւրելով, ամենատար միջոցներով սքողեալ նոր հարսի վերածելով կառավարութեան զրպարտեցին, որպէս զի կառավարութեան միջոցաւ կարենան իրենց անբուժելի վրէժը լուծել, վարդենիս հիմնահասակը՝ նեկ ապով :

Դ. Զ.

«կեղծոն» քայլ առ քայլ հետևած չըլլալ ժնէվցիներուն գործունէութիւնը չկարողացնելու կամ կասեցնելու համար: «կեղծոն» գործեց իր շահերուն, թաքթիքային պահանջներուն համաձայն, միայն ստանց ախար զնկելու: քննադատութիւններուն: «Գործեց» «կեղծոն» այո՛, չըլլա՞նք քննադատութեամբ, ճարպկութեամբ եւ իմաստութեամբ: Այս անթիւ պարտք կը սեպուի «կեղծոն» իս մասնաճիւղներուն, բրած օգտաշատ ծառայութիւններն ալ գոզել, որոնք ամենայն հրով թեմք: անգիտակցաբար հետեւեցան անոր հրահանգներուն, անգիտակ անոր ուղղութեան եւ անանց միջամտելու անոր գործերուն, բրփն այնքան՝ որքան կը ներքէր իրենց միջոցները:

Արդ, այս կարծ տեսութիւնէս վերջ անցնիմ ամենէն էական կէտին—մեր օրակարգին:

Տեսարթ, անչեւնիս ունինք յաւելուածներ, որոնցմով ժնէվցիները իրենց արտին մազձը թափեր են զընթացում, եւ որոնք միծառ մասամբ իմ անձին շուրջը կը դառնան: Աւելորդ չեմ սեպել յայտնել ձեզ թէ, անձով «կեղծոն» հարուածել է վատերուն նպատակը, հետեւաբար ժողովուրդը ուշադրութիւնը կը հրաւիրեմ այս խնդրին կարգադրութեան վրայ:

Այս աղտոտ եւ թունալից ճառարտութիւնը վերջացաւ, իմ ալ համբերութեանս բաժակը լեցուեցաւ, ըսաւ ընկերս զայրոյթով, բայց դեռ սպասելու էի այս զիմակաւոր-գաւաճաններուն վատութիւնները մինչեւ վերջը դիտելու համար, Գլխիս վեր ի վայր չըլլուած էր կարծես, հազարու մէկ խառնափնթոր գաղափարներ կանցնէին միտքս, հազար անգամ զըլջացած էի այս աղտոտ սեղը ինչալուս, քայքայ միւս կողմէ այն արարածներուն նկարագիրը, ուղղութիւնը, պիթքն նպատակները մտնէ քննելու առիթը ունեցայ: Միտքս աչքս մտածութեամբ կը շարձուէր, ժողովակապետներէն մէկուն ձայնը սթափեցուց զիս:

Տեսարթ Աստիճակները ըրած լուրջ եւ սրամիտ տեսութեանը համար գործնականութիւնս յայտնելէ վերջ, անսպասելի անգամ կողմէ նկատել որ, ժնէվցիները այն անգամ բաւական կանգնած վիճակի մը են թարկեցին մեզ, ըսաւ չանիկայ:

— Այո՛, Պ. Երթոյնիս կանչատ մը կէտեր, զորս հերքել զժողով է, քանի որ վկաներ ալ կան զուր-

սր, պատասխանեց Պ. Զուրթոյնեան որ բաւական լրջախոհ էր:

— Իմ կարծիքով, ըսաւ ուրիշ մը, շատ զուրիշ գործ է հերքել, սուս է ըսել բոլորը:

— Այո՛, այո՛, այսչափ ժամանակուան ծեծուած խնդիր է, մինչեւ հիմա գրածնիս նորէն կը կրկնենք, ասանկով բաւական երկար ժամանակ կրնանք զբաղեցնել ժողովուրդը, ամէն մէկ փաստի մէջմէկ առարկութիւն կրնենք, աւելցուց չորրորդ մը:

— Բոլոր մասերը եւ դիւանագիտական ազգանդներս գործածելու ենք խիստ ճարտարօրէն, որովհետեւ այս հարուածը լախտի պէս իջաւ, լաւ մաքրել պէտք է այս արտաք, կրկին խօսք քոնելով ըսաւ Պ. Զուրթոյնեան:

— Երբ յաջողինք այս խնդրոյն մէջ հակահարուածը տալ, ըսաւ Պ. Երթոյնը, այն ասան ժնէվցիներէն վրէժնիս պիտի լուծենք, անոնց աւերակներուն վրայ պիտի յայթօական կանգնենք, եւ այն օրը «կեղծոն» իս առաջին եւ ճշմարիտ յաղթանքիս օրը պիտի ըլլայ:

— Սակայն, Տեսարթ, խնդրեմ, կը չեղինք կոր նիւթէն, մէջ մտաւ Պ. Առուկերեան քիչ մը սրանեղած, ասոր միջոցը գտնելու է, իմ կարծիքով, այս անգամ ալ ամբոխին թոյլ կողմը նկատողութեան առնելու է, յիշենք «միտքիս» խնդիրը, զոր քիչ մը առաջ յիշեցի, որքան հրապարակը զգրկեցինք, որքան ժամամտակ ամբոխը զբաղեցաւ անով, դարձեալ նոյն միջոցին դիմելու է, ու այդ միջոցն է ՊԱՏՈՅ ԱՏԵԱՆԻ մը հարցը յուզել:

— Բայց ամբոխին տկար կողմը կընէք կերթաք որ միշտ, պատասխանեց Պ. Զուրթոյնեան, ամէն անգամ ամբոխին պէտք է նայինք, քիչ մըն ալ փաստաբանական օրէնքներուն ականջ կատելու է, վերջապէս անանկ մը ընելու է որ, ոչ կուտակցական լուրջ անհատներ եւ մեր հակառակորդները վրանիս չի խնցան, անմիտ առաջարկներ չընենք: Բան մը որ ձեռքէ եւ ոչ մէկը կը նկատէ, սա է որ, ժնէվցիները այդ յաւելուածները հրապարակ նետած են ո՛չ թէ անհատական խնդիրներ յուզելու նպատակաւ, այլ «միտքիս» խնդրին մէջ մեր բռնած ապօրինաւոր քայլերը երեւան հանելու ու մեր ալ ուղղութիւնը, գաղափարի փոփոխութիւնները քննադատելու համար, անոնցմէ վերջը կուզան անձնական խնդիրներ, Այս

ըսածներուս մասնաւոր ուշադրութիւն կը հրաւիրեմ:

— Բայց...

— Ո՛չ, ո՛չ, սքանչելի է Պ. Առուկերեանին միտքը, ըսաւ Պ. Երթոյնեան:

— Այո՛, սքանչելի ալ է, հիանալի ալ է, բայց եթէ ընդունուի՛, ըսաւ ուրիշ մը:

— Բնականաբար առարկութիւններ պիտի ընեն, եւ արդէն իմ ուզածս այդ է, ես Պոլիս ալ առաջարկեցի «Պատույ Ասեան» ինչպէս գիտէք, եւ չընդունուեցաւ, մէջ մտաւ Պ. Առուկերեան:

— Արտասահմանը Պոլիս չէ:

— Ճանաչել, հակառակ պարագային, ընդունուի ալ նէ, «ասեան» խնդիրներուն մէջ այնքան սոսրկութիւններ, ձգձգութիւն կըլլան որ, տարիներ կը տեւէ, արդէն մեր ալ փրնտաւոր թէ ժամանակ վասակել է եւ թէ ժողովուրդը բանով մը զբաղեցնել:

— Եթէ վարպետակ կերպով շարժինք, կրնանք գաղափար օրէնքներու շնորհիւ, անիրաւ ըլլալովիս հանդերձ իրաւացի ելնն, աւելցուց Պ. Երթոյնեան:

— Բայց եթէ ժնէվցիները իմ գիտցած ժնէվցիներս են նէ, ըսաւ Պ. Զուրթոյնեան, ասանկ անարամբան, միակողմանի եւ անիրաւորելի առաջարկի մը չեն խաբուիր, ինչպէս շատ անգամներ, անոնք անձնական խնդիրներէ միշտ խոյս կուտան, բացէք իրենց օտկանը սկիզբէն մինչեւ վերջ եւ պիտի համոզուիք: Անշուշտ իրենք ալ իրենց առաջարկները ունին եւ կրնան ալ:

— Ինչպէս որ «միտքիս» խնդիրն ժամանակ, շնորհիւ անոնց լուծութեան եւ մեր ալ խօսելուն ժողովուրդը կարծեց թէ «կեղծոն» է անկեղծօրէն միտքիս բաղձացող, հիմա ալ չըլլայ որ ժողովուրդը ուշադրութիւն դարձնէ թէ «միտքիս» խնդրին առթիւ ժնէվցիները այս յաւելուածները հրապարակած են, մենք առանց ժամանակ կորսնցնելու մեր իսկ շահերուն համար, անհատական վերածելու եւ «Պատույ Ասեան»ով զբաղեցնելու ենք ժողովուրդը: Եւ որպէս զի այն միջոցը բարեբար արդիւնք ունենայ, ասանց երբէք խօսուածներուն, եղած քննադատութիւններուն կարեւորութիւն տալու, «կեղծոն» այս խնդիրը յուզելու աշխատելու է, քաջ համոզուած ըլլալով որ, ապարդիւն եւ անիրաւ գործելի պիտի մնայ, ահա՛ այն ժա-

մանակ, մենք իրաւունք կուենանք պոստուլու. — սեսա՞ք, ժնէվցիները վախցան մեր այնքան օրինաւոր առաջարկէն, դաւաճան են ուրեմն, բաւական է որ, քանի մը հոգի մեր առաջարկին արձագանք ըլլայ, խօսեցաւ Առուկերեան:

— Հարուածը շատ ուժգին ու ջախջախիչ է, աւելցուցին մէկ երկուներուն ուշադրութիւնը յեղափոխական գործէն կրնանք ալ վրիպեցնել:

— Եւ այս լուրը, շարունակեց Պ. Առուկերեան ուրախացած, նախ արձագանք գտնել տալուէ մեղի համակիր հեռաւոր եւ մոտաւոր թերթերով, արդէն թերթեր ալ կան՝ որոնք ամբոխին պէս հոտանքին կ'ենթարկուին, գրելու է նաեւ մասնաճիւղներուն: Աստիճակ քանի մը շաբաթ վերջ, երբ անոնք մաքրել կը պատրաստեն, մենք ալ Մարտին ճակատը կ'ծու ազգաբարութիւնով մը հարուածը կ'այծակի պէս կ'իջեցնենք: անկից յետոյ, ամէն ամիս մէջմէկ քիչ քան գրելով բան գործ կրնենք: Որոշուած ընդունուեցաւ մեծամասնութեան կողմէ, ժողովը փակուեցաւ, ըսաւ ընկերս գարշելով, խմբագրութիւններուն եւ մասնաճիւղներուն գրուելիք նամակները ինքը՛ Պ. Առուկերեան՝ յանձն առնելով, եւ ո՞վ զիսէ անշուշտ ճառարտութեան համապատասխան նամակ մը...:

Ու վերջ գտաւ այս ազգայնաւ տեսարանը: Ես զժողովութիւնը ունեցայ սակայն տեսնելու թէ ազգին անունով, ժողովրդին շահերը պաշտպանելու զիմակով ի՞նչ աներեւակայնի վատութիւններ կը գործելին: Զայրուեթէս վեր թողայ, արթնցայ ու ինչպիսիս զայս սենեակիս մէջ:

Բայց յախտեան չի կրնար հեռանալ մտքս այն արտաքի ճառին պարունակութիւնը եւ անոր յարակից գասերը, մանաւանդ երբ համոզուած եմ թէ, աստիճակ իրականութիւն ունին բոլորը՝ այս քանի մը տարուանս ընթացքին մէջ, եւ դեռ կը շարունակուին նոյն իսկ այսօր...»

Ընկերոջս տարօրինակ պատմութիւնը իրեն հետ զիս ալ ապշեցուց, այդքան ալ իրական զուգարիպութիւն...: Մարտի եւ անոր արժանի ընկեր թերթերու պարունակութիւններուն օրը օրին հետեւած եմ, որ ընկերոջս պատմածները չըլլային մը

ճանչուած Հասրնոն, բարկութիւնէն կրակ կտրած անջեւերն կանցնի, եւ հարսի տարալի ներքեւ սքողուած սարկաւազը կը պահանջէ աստիճակէ հայերը փոխանակ յանձնելու: մէկէն ի մէկ յարձակողական դիրք կը բռնեն, որով Հասրնոն եւ իր երկու ընկերները կը զարնուին, իսկ հայերը կանահատանան: Այսմ այս աղետը մեծ է եւ անպատուաբեր: օրով կարելի չէ ասանիլ այդ բաները տեսնելով չըլլալայ ամբողջ աշխրէթ քիւրտերը հաւաքուած եմք աստ, կազմ եւ պատրաստ կը սպասեմք, եթէ կառավարութիւնը մեր փափաքածին պէս չընէ, այդ պիւղին եւ այդ աղտոտ սարկաւազը չը ձերբակալէ, մենք ամէն տեսակ զոհողութիւններ յանձն առնելով պիտի ընենք, միտքս թէ 24 ժամու չափ սպասելով: Եւնկից յետոյ ազատ ենք ու եւ պատասխանատուութիւնէ, եւ միտքս այն մեր այդ առարկուած գիւղի մասին ծրար

զրածներս ի գլուխ հանելու ալ պատրաստ եմք»:

Միտքս արթնցաւ եւ միանգամայն ոտախկնապետն, այդ նամակը քիւրտ գրաբէլէն ստանալով, անմիջական կերպով հեռագրեցին Պիթիլիս կուսակալին: Եւ ձեռք առնուելիք գործողութեան մասին հրահանգներ տալուն սպասեցին:

Մշոյ եւ Պիթիլիսի կառավարութիւնները երկու տեսակ գաւազրութիւնք կը զարձուէին: առաջին հայ տարրը ամէն տեսակէտով Բ. Գրան աչքէն ձգելու, որպէս զի ամենադիւրութեամբ կարենային շահագործել, ինչպէս որ այդ ճիւղին մէջ 1878 թուականներէ սկսեալ, ամենայն ճարպկութեամբ կրցան ստալ տանիլ, եւ հայի ձեռքը գտնուած ինչքն ու ստացուածքն գրաւել: Իսկ երկրորդը՝ Բաւոֆ փաշան հետացնել, անոր համար որ տարրեր ուղղութեամբ մը կրննթանայ, հայոց կողմանէ ե-

զած բողոքներուն կարեւորութիւն տալով գաղտարաններուն կը յանձնէ, եւ ըստ օրինի գործադրելը կը հրամայէ: Եւ այդպէսով կարելի չըլլար իրենց շահագործութիւններն առաջ տանիլ: Հետեւաբար, միջոցներու մասին խորհել պէտք էր մեր կողմանէ, որ մեր շահերը չը վնասուին, եւ այսպէսով տարիէ մը ի վեր էր որ այդ գարձուածքներն կը գտնար, եւ ասանց պատճառով անկարելի էր բան մը ընել, յարմար առիթի կը սպասուէր: Ես հարկ է հարցնել թէ՛ ի՞նչ բանէ հարկադրեալ կառավարութիւնը Բաւոֆ փաշայի դէմ լարուած էր, եւ պատճառներ կորոնէր հեռամտած կը, թէ ամբոխներով հետամտած էր, մինչեւ որ պարզեմիսի զէպքը վրայ գալով կուտակալը խալեցին, իսկ վերջինս Բ. Գրան խալելով՝ պատասխանատուութեան ներքեւ մնայ:

Ահա թէ ինչ էր պատճառը:

1889ին Բաւոֆ փաշան, երբ Մշոյ աշխարհ մտաւ, տաճկական նենդ խորամանկութեամբ, բոլորովին տարբեր ուղղութեան մը հետեւեցաւ, ձգելով իր յաջորդ կուսակալներու ուղղութիւնը, սկսաւ առ երեսու հաւառակ կողմը բռնել, հայոց կողմէ եղած բողոքներն մասամբ ի նկատի առնելով անմիջական ձեւով գատարանի կը յանձնէր, արգարութիւնը հրապարակելու, այդ բողոքներու նկատմամբ: Չենք զլանար մէջտեղ բերել, մտնէն հայ ժողովրդեան ծանոթացնելու, իրրեւ նմոյ այն անխիղճ բարբարոսութեանց՝ որ ձիգ տարիներու մէջ գործուեցան, հայ ժողովուրդը նիւթապէս մինչեւ գերեզմանի սէմ հասցուեցնելով:

ՄԱՍՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԻԱՆ,  
(Շարունակելի)

օգակին պէս անոնց մէջ իրարու ետեւէ շարուած են : Ու այս ամենէն վերջ, զարմանալին հոն է որ, ճիշդ ընկերոջս այդ բանը պատահելէն քանի մը օր վերջ, հրապարակը ողորուեցաւ «Պատույ Ասեան»ի քողին սակ պահուած դաւերով : «Պատույ Ասեան»ի ճիշդութիւնը առատութիւն մը կայ : հրապարակին վրայ, որը «չէզոք»ը գիտակ ընտրեց, որը «անկողմնակալ»ը եւ այլն ու դեռ գալիքներէն զատ :

Եւ դու, հայ ժողովուրդ, դեռ հաւատա՞ թէ ամէն վրաց ողորացող խորհող անկեղծ է . . . :

ԱՆՈՒՇԱՒԱՆ

ՏԻՈՒՐ ԵՐԵՒԱՅԻ

Տեղս դաւաճան խմբակի ոգեւորութիւնը կատարեալ է : Ըրին չըրին իրենց պաշտեցեալ «Հուլուգո»ի խմբակի «մեծ մարդուկ»ը տեղս բերին, բայց մենք կը կարծէինք թէ այդ «մեծ մարդուկ»ն որ իր խելից ու կրակ խելքով «ազգային նուիրական դատին» առթիւ, դաւաճաններու հետ ձայնակցելով հրապարակը բարեխոսեան աղմուկներով լեցուց՝ անուղղակի կերպով ազգային ամէն եղած սրբութեանը դաւաճանելով, գոնէ խելքի գալով՝ իր սխալէն սթափուած ըլլար, այլեւս լրջութեամբ ամէն տեսակ հանրային ինքրոց հետամտելու : Իր հրապարակագրական պարտականութիւնը լիովին կատարելու համար, ընդհակառակն, շատ խաբուած ենք եղբւր, փոխանակ զգատտանալով այդ տեսակ զարշնիներէն զգուելու ու յետս քաշուելու, տեղս ելնելուն պէս, «ափալ թափալ» վաղեց զնաց, գրկաբաց ընդունուելով դաւաճաններէն : Եւ մինչեւ մեկնելին իր տեսակցութիւնը միմիայն անոնց հետ ըլլալով, չը գիտենք թէ արդեօք այս անգամ ի՞նչ դաւադրական նիւթեր դուրս բերել պիտի տայ, ժամանակ մը եւս իր ան«իրաւունք» թերթը զբաղեցնելու ու ժողովրդեան ճակատագրին հետ խաղալու :

Բա՛ւ է, և միանգամայն մե՞ծ ամօթ . եթէ խելքի նշոյլ իսկ կը գտնուի այդ տեսակներու քով, պէտք է ժողովրդեան շահերն եւս ինկատի առնուին : որքան որ ժողովուրդը տուժեց, այդչափին ալ բաւականանալով՝ կրկին տուժել չը տրուի : Խմբագրի մը մե՞ծ ամօթ է և աններելի յանցանք դաւաճանի մը բարեւն իսկ ընդունիլ : երբ ընդհակառակն դաւաճանի մը բարեկամ է, ի՞նչպէս կարող է ժողովրդեան շահերն պաշտպանել, քանի որ ժողովրդեան աչքէն ինկած ու վաճառուածի մը ձայնակից ու գաղափարակից կը գտնուի : Կը խնդրեմ ըսէք, ի՞նչ բանով կը զանազանի այդ տեսակներէն, և ի՞նչ անուամբ պէտք է մկրտել զինքը . . .

Անցեալները «իրաւունք»ի թիւ

ւերէն միոյն մէջ կարգացինք «Ժողովրդեան ձայն» խորագրով խմբագրական մը, որ այդ «մեծ մարդուկ»ն ( . . . ) Ծումուրի ու Սիլիոտրէի կողմերը պատած սիւնոցին, իբր ( . . . ) թէ ժողովրդեան կարծիքն շոշափելով էր գրած . և երբ տեղս եկաւ, ի՞նչ տեսակ ստոր, ցած, գարշելի ինկած մարդոց հետ տեսնուիլն ու մեկնելն ու աստ եղած շարժումներն տեսնեք, բոլորովին շուտընդմեջ մնացինք : Այդ պախարակելի ընթացքը զմեզ յոռի եզրակացութեան բերաւ : այսինքն՝ իր «Ժողովրդեան ձայն» խմբագրականը կողակածի ենթակել տուին : Արդեօք այնտեղի առարկուած ժողովուրդն ալ տեղս իր տեսած երկու կամ երեք անհատներուն ( . . . ) կը նմանի : եթէ այդպէս է եղած, վա՛յ և բիւր անգամ վա՛յ մեզ ժողովրդեանն որ, առաւօտուն շուտ քունէն վեր ելնողը խմբագրատուն կը վաղէ խմբագրի . . . ըլլալու, ժողովուրդը պէտք ուղղութիւն, ազգասիրութիւն և բարոյականութիւն առաջնորդելու, որ դեռ եւս իրենք երկար ժամանակներ առաջնորդուելու պէտք ունէին : Ծատ պարզ է ու բնական որ մարդս որ միջավայրի մէջ որ ապրի, իր քննադատական բաղդատութիւններն իր բնական միջավայրի վրայ շափելով կրնէ, հետեւաբար՝ մենք այսպէս տեսնենք, այժմ եւս կը լսենք, ու միանգամայն կը սպասենք, մինչեւ որ տեսնենք թէ Պուրկաղի ժողովրդեան ձայնը, ոչ դաւաճանական ձայն, խմբագրականն եւս դուրս գայ, որպէս զի մենք ստիպուինք պարզել թէ՛ ի՞նչ անցողորմեք պատահեցան տեղս և և բանակցած մարդոց ի՞նչ տիպարի տէր ըլլալն գրենք, վճիռը ժողովրդեան ձգելով թէ՛ կը վայելէ՞ հրապարակագրի մը այսպիսի աններելի քայլ մը առնուլ թն ոչ :

ԳԻՏՈՂ  
Պուրկաղ, 20 Մայիս

ՈՐԲԱՍԻՆԱՍԻ ԾՈՒՐՅՈՒ

Տեղուս երկուս Որբասինամի կանոնագիրը դեռ հրապարակ չեկած, գործ ժողովը՝ ըստ տեղական մի թերթի, իր անգամայնէն մէկը կողարկէ Ռուսոմք, Ծումուր, Որբասինամի կողմերու նպատակաւ :

Որբասինամիները հաստատուն հիմերու վրայ յենելով մշտապէս յարատեւութեան փափաքող մը եմ : և քանիցս ականատես ըլլալով չնչին անտարբերութեանէ մը ասոր նման ուրիշ ընկերութիւններու միատեսելուն, կը փափաքեմ տեղեակ ըլլալ թէ, այդ անձնաւորութեան ճանապարհածախսը ընկ. «հաշտուլ» կըլլա՞յ . և այդպիսի մի ճանա

պարհորդութիւն ընկ. կազմական կանոնագիրը կարածէ՞ արդեօք . մանաւանդ որ Որբասինամի ընկերութեան գործադիր ժողովը 38 անդամներու քուէարկութեամբ ընտրուած է : Եւ այսօր և թէ մեր լսածները ճիշդ են ընկ. անդամներու թիւը հարիւր տասնի կը հասնի և այդ վերջէն անդամակցողները կազմական կանոնագրի տեղեակ չըլլալով, միմիայն որբերը խնամելու ազնիւ գաղափարով տողորուած անդամակցած են : և միւս կողմէն կը լսուի թէ Ռազուկան Խորհուրդը յիշեալ ընկերութեան կազմական կանոնագիրը շատ համառօտ զբաղած է :

Հետեւաբար քանի որ ընկ. գործ ժողովը 38 անդամներու քուէով ընտրուած է, այսօր այդ թիւը հարիւր տասնի բարձրացած է, և քանի որ կազմական կանոնագիրը, որուն պարունակութիւնը բացի 38 անդամներէ՛ մնացածները չեն գիտեր, թաղականութիւնը դեռ վաւերացուցած չէ, աւելի լաւ կըլլայ որ վերջէն անդամակցողներն ալ հասկնան թէ կազմական կանոնագրի տրամադրութիւնները ի՞նչ են և թաղականութիւնը ի՞նչու չի վաւերացներ : Կը կարծենք թէ Որբասինամի ընկ. կանոնագրի շաղկապ մէջ զնիւր համար պէտք է ընդ. ժողովը գումարուի, քանի որ կը լսենք թէ ժողովի ատենապետը Եւրոպա գացած է և անդամներն մէկը հրաժարած :

Երկուս Որբասինամի Անդամակցող մը

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Չինաստանի մէջ սարսափելի յուզում կայ քրիստոնեաներու դէմ : Իէքինի շուրջը գրեթէ բոլոր չին գիւղերը ապստամբած են : Եւրոպական բոլոր մեծ պետութիւնները նոյնպէս և Ամերիկայ չորք կը զրկեն իրենց հպատակները պաշտպանելու համար :

— Տաճիկ կառավարութիւնը ռուսական, սրբապական և պուրկարական ապրանքներու մաքսը 100-ին 30 և 50 բարձրացուցէր է :

— Իրեստրիան բոլորովին առնուած է . անգլիական չորքերը արդէն հոն են :

— Նախագահ Քրիկէթրի փախուստը անգլիացիները շատ ապշեցուցած է . չը գիտցուի յոստահատուելէն փախած է թէ, զուգէ ապաստանիլ լեռնավայրերը մասնակի յարձակումներ գործելու անգլիացիներու վրայ :

— Յամենայն դէպս պատերազմը վերջացած կը համարուի :

— Նախագահ Քրիկէթրի նիւերքի թերթերէն միոյն հեռագրած է որ պատերազմը պիտի շարունակեն մինչեւ վերջին շունչը :

— Ռուսիոյ պատերազմական նախարարը՝ Նի. Բոլա Չարին անցեալ տարի հրապարակած ուրախը, ուսանողական խառնակութիւններու մասին, լրացնող հրաման մը արձակելու է : Այս ուրախը և հրամանով ուստիկանութիւնը իրաւունք ունի խոստարար երեւցած ուսանողը ձերբակալելու և խելոյն ուղարկել զինուորական զանապստի զօրազուններու մէջ, զրկելով համապարանի տուած առաւելութիւններէն :

Զօրանոցը, բանտը և Սիպերիան չի պիտի կրնան ուստի տակից երիտասարդութիւնը կասեցնել ուստի ժողովուրդի մէջ ապստամբական ոգին զարգացնելու գործէն :

— Վառնայի շրջականները, Բարիէրաի քարահանքի մէջ երկու պուրկար և մէկ հայ հողակոյտի տակ մնացած են քարահան միջոցներն : Հայը և պուրկարներէն մին մեռան, իսկ երկրորդ պուրկարը ծանրապէս վիրաւորուած՝ փոխադրուած է Վառնայի հիւանդանոցը :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բարիզի մէջ մտերմ նոր բացուած է հայկական ընթերցարան մը ուր կը գտնուին 30է աւելի օտար եւ հայ լեզուով լրագիրներ :

Հասցէ՝  
Հայկական ընթերցարան  
Քամբաներ Բրամիէն փողոց Թիւ 9  
Բարիզ

Ա. Զ. Դ.

Ընթերցարանի դասախօսութիւններն սկսած են . ուսանիլ փափաքողները կարող են միշտ եքթալ հսկող պաշտօնեային քով արձանագրուիլ :

Պուրկարներէն և Քրանսերէն լեզուներով կը թարգմանուին և կը գրուին փոքրիկ փոխարժէքով ամէն տեսակ նամակներ և գրութիւններ Վառնայի ընթերցարանի մէջ :

Մ. Զ. ի հրատարակած Հովասուն և Թոթովուրք անուն գրքքոյկներու հասոյթը նուիրած է հեղինակը տեղուս ընթերցարանին :

Կը ծախուին Վառնայի ընթերցարանին մէջ :

Ընթերցարանը Զորեքչարթի օրերը յատկացուած է կրնելու :

«ԾԱԽԻՂ»

Շարիդ ձեռքէ չի ծախուիր, Բաճնկիւն է Պուրկարիոյ համար 10 Քրանք, արտասահմանի համար 12 Քրանք, Ամերիկայի համար 2 1/2 տուր :

Հասցէն՝  
Rédaction de la revue «Chavigh»  
pensionnat Arménien  
Varna

Печатница «Врачимость» Варна